

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա  
գիտական խորհրդի առցանց նիստի

ք.Երևան

07 հուլիսի 2020թ.

**Ներկա էին՝** գիտխորհրդի 24 անդամներից 22-ը (ներկայաթերթիկը կցված է):  
**Նախագահ՝** ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան  
**Գիտական քարտուղար՝** ք.գ.թ. Ա. Դադայան

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝**

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի 2016-2017 ուս. տարվա հայցորդ Լուսինե Յուրիկի Սահակյանի «α-ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը և կենսաակտիվության ուսումնասիրությունը» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

**Զեկուցող՝ Լուսինե Յուրիկի Սահակյան**  
**Ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սաղյան**

2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված «Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի տեսական և կիրառական հիմունքները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը: **Զեկուցող՝ Ա. Դադայան**

**3. Ընթացիկ հարցեր**

- Ֆարմացիայի ինստիտուտում նոր մագիստրոսական ծրագրերի բացման հարցը:

**ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝**

1. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի 2016-2017 ուս. տարվա հայցորդ Լուսինե Յուրիկի Սահակյանի « $\alpha$ -ամինակարագաթթվի ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը և կենսասակտիվության ուսումնասիրությունը» թեմայով ատենախոսական աշխատանքի քննարկում և գիտական խորհրդի եզրակացության հաստատում:

**Լսեցին՝** Լուսինե Սահակյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանը, դ.գ.թ. Ա. Սահակյանը, բ.գ.դ Է. Սեկոյանը, բ.գ.դ. Ռ. Հովհաննեսյանը, դ.գ.դ. Ն. Չիչոյանը, կ.գ.դ. Ս. Բադալյանը, ովքեր նշեցին, որ Լ. Սահակյանի կողմից կատարվել է ծավալուն աշխատանք և ստացվել են արժեքավոր արդյունքներ.

- Սինթեզվել են 4 նոր, օպտիկապես ակտիվ հետերոցիկլիկ տեղակալված ( $S$ )- $\alpha$ -ամինակարագաթթվի ածանցյալներ, որոնք ապագայում կարող են կիրառություն գտնել ֆիզիոլոգիապես ակտիվ պեպտիդների և այլ դեղապատրաստուկների նախագծման գործընթացներում:
- Իրականացված ուսումնասիրությունների արդյունքները վկայում են այն մասին, որ  $\alpha$ -ամինակարագաթթվի  $\beta$ -հետերոցիկլիկ տեղակալված տարբեր ածանցյալների սինթեզը և կենսաբանական տարբեր ակտիվությունների ուսումնասիրությունները հեռանկարային են և միաժամանակ թելադրելում են **NSAA-5c** և **NSAA-6** ամինաթթուների էֆեկտիվության հետագա ուսումնասիրությունների անհրաժեշտությունը՝ որպես թաղանթակայունացնող, նյարդապաշտպան հատկություններով օժտված պոտենցիալ հակաօքսիդանտների:

Գրախոսներ բ.գ.դ. Է. Սեկոյանը և ք.գ.թ. Հ. Միմոնյանը նշեցին, որ Լ. Սահակյանի կողմից կատարվել է մեծածավալ աշխատանք, մասնավորապես.

1. սինթեզվել են գրականության մեջ չնկարագրված  $\alpha$ -ամինակարագաթթվի օպտիկապես մաքուր չորս նոր հետերոցիկլիկ տեղակալված նմանակներ՝
  - (2*S*,3*S*)- $\beta$ -[3-(թիոֆեն-2-իլ)-4-պրոպիլ]-5-թիօբսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]- $\alpha$ -ամինակարագաթթու (**NSAA-5a**),

- (2S,3S)-β-[3-բութիլ-4-(ֆուրան-2-իլմեթիլ)-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ամինակարագաթթու (NSAA-5b),
- (2S,3S)-β-[3-բութիլ-4-պրոպիլ]-5-թիօքսո-1,2,4-տրիազոլ-1-իլ]-α-ամինակարագաթթու (NSAA-5c),
- (2S,3S)-3-[2-թիօքսո-2,3-դիհիդրոբենզիմիդազոլ-1-իլ]-α-ամինակարագաթթու (NSAA-6)

Պարզաբանվել է դրանց կառուցվածքն ու բացարձակ կոնֆիգուրացիան, մշակվել է դրանց կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզի ընդհանուր մեթոդ:

2. Հետազոտվել է NSAA-5c և NSAA-6 ամինաթթուների կենսասակտիվությունը, բացահայտվել է, որ դրանք`

- ցուցաբերում են խտություն կախյալ հակաօքսիդանտային ակտիվություն` շնորհիվ ՍՕՂ-միմետիկ ակտիվության,
- ցուցաբերում են ունիվերսալ թաղանթակայունացնող ազդեցություն` շնորհիվ թաղանթային կառուցվածքների կարևոր բաղադրիչ հանդիսացող NADPH օքսիդազների իզոմերների հեմոգլոբինով հարուցված ռիլիզինգի ընկճման, որը կրում է խտություն-կախյալ բնույթ,

- իրենց տեսակարար հակաօքսիդանտային ակտիվության մակարդակով մոտ են տաուրինին և գրեթե եռակի անգամ գերազանցում են (S)-արգինինին, օքսիդատիվ-նիտրոզատիվ սթրեսի մոդելավորման պայմաններում NSAA-6 ամինաթթվի ազդեցությամբ նկատվում է NADPH օքսիդազի գումարային ֆրակցիայի արտազատման ընկճում ինչպես հեպատոցիտների, այնպես էլ նեյրոնալ թաղանթներից (պլազմատիկ, կորիզային, միտոքոնդրիալ), որն իրականանում է շնորհիվ նրա հակաօքսիդանտային ակտիվության, և որը ռեզիստենտ է ջրածնի պերօքսիդի, սուպերօքսիդային և հիդրօքսիլային ռադիկալների հանդեպ: Դա հիմք է տալիս NSAA-6-ը դիտարկելու որպես նոր հեռանկարային նյարդապաշտպանիչ միջոց:

Գրախոսների կողմից եղան նաև որոշ դիտողություններ, որոնք ընդունվեցին հայցորդի կողմից` համապատասխան փոփոխություններ կատարելու համար:

Է. Սեկոյանը և Հ. Սիմոնյանը, ելնելով արձանագրված արդյունքներից, առաջարկեցին վերանայել աշխատանքի վերնագիրը` այն բովանդակությանը համապատասխանեցնելու համար: Առաջարկությունը գիտխորհրդի

անդամների կողմից ընունվեց միաձայն և քննարկվելուց հետո բաց քվեարկության դրվեց հետևյալ վերնագիրը՝ «α-Ամինակարագաթթվի հետերոցիկլիկ ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը, հակաօքսիդանտային և թաղանթապաշտպանիչ հատկությունների ուսումնասիրությունը»:

**Որոշեցին՝** (միաձայն)

1. Վերահաստատել Լուսինե Յուրիկի Սահակյանի թեկնածուականատենախոսական աշխատանքի թեման նոր վերնագրով՝ «α-Ամինակարագաթթվի հետերոցիկլիկ ոչ սպիտակուցային նմանակների կենսամիմետիկ սինթեզը, հակաօքսիդանտային և թաղանթապաշտպանիչ հատկությունների ուսումնասիրությունը» ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ՝ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:
  2. Հաստատել Լուսինե Յուրիկի Սահակյանի թեկնածուականատենախոսության վերաբերյալ գիտական խորհրդի եզրակացության նախագիծը:
2. Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի կողմից ներկայացված «Բարձրարդյունավետ հեղուկային քրոմատոգրաֆիայի տեսական և կիրառական հիմունքները» վերնագրով ուսումնամեթոդական ձեռնարկի արտաքին գրախոս նշանակելու հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի գիտական քարտուղար Ա. Դադայանին, ով ներկաներին հաղորդեց այն մասին, որ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Ավետիս Հովհաննեսի Ծատուրյանի հեղինակությամբ ձեռնարկը ենթարկվել է ներամբիոնային գրախոսության (գրախոս նույն ամբիոնի ասիստենտ ք.գ.թ. Վիրաբ Կիրակոսյան) և քննարկվել է նաև Ֆարմացիայի ինստիտուտի մեթոդական խորհրդի նիստում (նիստ թիվ 1, առ. 01.07. 2020): Ա. Դադայանը նշեց, որ կարծիքները դրական են և ինչպես գրախոսի, այնպես էլ մեթոդխորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկություններն ու դիտողություններն ընդունվել են ասիստենտ Ա. Ծատուրյանի կողմից և կատարվել են համապատասխան շտկումներ:

**Ելույթ ունեցան՝** ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, ք.գ.թ. Ս. Վարդապետյանը, ովքեր կարևորելով ուսումնական ձեռնարկի անհրաժեշտությունը, առաջարկեցին այն ուղարկել արտաքին գրախոսության Հայաստանում հայտնի «Ստանդարտ Դիալոգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, որը իրականացնում է ուսումնախորհրդատվական ծառայությունների մատուցում, ուսուցում և վերապատրաստում, միջազգային ստանդարտների պահանջներով կառավարման համակարգերի ներդրում և գնահատում և բավարարում է համապատասխանության գնահատման մարմիններին ներկայացվող չափանիշներին, գրանցված է «Եվարսիական տնտեսական միության սերտիֆիկացման մարմինների եվ փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում» և նշանակված է ԵՏՄ կանոնակարգերով աշխատելու համար՝ պարենային և ոչ պարենային ապրանքախմբերով:

**Որոշեցին՝** (միաձայն) Ա. Հ. Ծատուրյանի հեղինակությամբ ուսումնամեթոդական ձեռնարկը արտաքին գրախոսման ուղարկել «Ստանդարտ Դիալոգ» ընկերություն:

### **3. Ընթացիկ հարցեր:**

- Ֆարմացիայի ինստիտուտում նոր մագիստրոսական ծրագրերի բացման հարցը:

**Լսեցին՝** Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի պաշտոնակատար, ակադեմիկոս Ա. Սաղյանը, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց այն մասին, որ դեղարդյունաբերության ոլորտում մրցունակ մասնագետներ պատրաստելու, կրթական ծրագրերը ժամանակին համահունչ դարձնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նոր մագիստրոսական ծրագրերի կազմակերպման համար: Ա. Սաղյանը հորդորեց գիտխորհրդի անդամներին ներկայացնել իրենց առաջարկներն այս հարցի վերաբերյալ:

**Ելույթ ունեցան՝** գիտխորհրդի անդամներ Ա. Հովհաննիսյանը, Ա. Սահակյանը, Ռ. Հովհաննեսյանը, Հ. Միմոնյանը, ովքեր կողմ արտահայտվեցին նոր մագիստրոսական ծրագրեր բացելուն և առաջարկեցին հետևյալ ուղղությունները.

1. Արդյունաբերական դեղագիտություն
2. Կլինիկական դեղագիտություն

3. Դեղատնային դեղագիտություն
4. Դեղերի որակի հսկում և մոնիթորինգ

**Որոշեցին՝** (միաձայն)

1. Կողմ արտահայտվել հնչած առաջարկներին և բացել նոր մագիստրոսական ծրագրեր՝ վերը նշված ուղղություններով:
2. Սույն որոշումը ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝  
տնօրենի պաշտոնակատար,  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան